ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ ՄԵՆՔ ԵՐՋԱՆԻԿ ՈՒ ԱԶԱՏ ԵՆՔ

★★★ ★★★ ★★★

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՔՆԵՐՈՒՄ

ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ

ՀԼԿԵՄ Լենինականի քաղկոմի նախաձեռնությամբ ֆիլհարմոնիայի դահլիճում տեղի ունեցավ երիտասարդ ընտրողների համաքաղաքային հավաք՝ նվիրված Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրություններին։ Հավաքի մասնակիցները իրենց անսահման սերն ու նվիրվածությունն էին հայտնում ժողովուրդների առաջնորդ մեծ Ստալինին, բոլշևիկյան պարտիային ու սովետական կառավարությանը։

Բեմ է բարձրանում արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթած, ընտրություններին առաջին անգամ մասնակցող Արամայիս Հովհաննիսյանը։

—1947 թվի փետրվարի 9-ին,—ասում է նա,—ես առաջին անգամ պետք է մասնակցեմ ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի ընտրություններին։ Դա իմ կյանքում մեծ իրադարձություն է։ Շնորհակալություն մեծ Ստալինին իմ այսօրվա երջանկության և պայծառ ապագայի համար։

—1947 թվի փետրվարի 9-ը՝ Հայկական ՍՍՌ Գերագույն Օրգանի ընտրությունների օրը հատկապես նշանակալից է մեզ, արտասահմանից հարազատ ժողովրդի գիրկը վերադարձած հայ երիտասարդներիս համար,— ասում է Ս. Զիլեթչյանը։— Ընտրությունների օրը կդիմավորեմ արտադրական նոր հաջողություններով և իմ ձայնը կտամ Լենինի-Ստալինի պարտիային անսահմանորեն նվիրված, ժողովրդի հարազատ ներկայացուցիչներին։

Հավաքի մասնակիցները կոչ արեցին բոլոր երիտասարդ ընտրողներին՝ Գերագույն Սովետի ընտրությունները դիմավորել արտադրական նորանոր նվաճումներով։

Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

Դիլիջանի կուլտուրայի տանը կայացավ երիտասարդ ընտրողների քաղաքային հավաք՝ նվիրված Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրություններին։ Երիտասարդ ընտրողները հետաքրքրությամբ լսեցին ՀԼԿԵՄ Դիլիջանի շրջկոմի քարտուղար ընկ. Ս. Մամյանի զեկուցումը՝ «Մեր ընտրական սիստեմը ամենադեմոկրատական սիստեմն է աշխարհում» թեմայով։ Հավաքում ելույթ ունեցան բազմաթիվ երիտասարդներ, որոնք իրենց ջերմ խոսքն էին ուղղում երիտասարդության բարեկամ և ուսուցիչ մեծ Ստալինին։

— Իրականացան մեր իղձերը,—ասում է արտասահմանից հայրենիք ներգաղթած Միհրան Դիրձյանը։—Ես հպարտ եմ, որ սովետական մեծ երկրի քաղաքացի եմ և բոլորի հետ համահավասար իրավունք ունեմ մասնակցելու ռեսպուբլիկայի պետական իշխանության Գերագույն Օրգանի ընտրությանը։

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

ՀԼԿԵՄ Էջմիածնի շրջկոմի նախաձեռնությամբ տեղի ունեցավ արտասահմանից հայրենիք վերադարձած հայ երիտասարդների քաղաքային հավաք։ «Ստալինյան Կոնստիտուցիան ամենադեմոկրատական կոնստիտուցիան է աշխարհում» թեմայի մասին զեկուցեց ՀԿ(բ)Պ Էջմիածնի շրջկոմի քարտուղար ընկ. Ս. Պարսամյանը։ Զեկուցումից հետո ջերմ ելույթներ ունեցան բազմաթիվ հայրենադարձ երիտասարդներ։ Իրանից ներգաղթած 18-ամյա Գրիգոր Թումանյանը իր ելույթում ասաց.

—Հայրենի հողի վրա մենք երջանիկ ու ազատ ենք. բայց մեր երջանկությունը ավելի մեծանում է նրանով, որ մեծ Ստալինի կերտած Կոնստիտուցիան մեզ տվել է ընտրելու իրավունք։ 1947 թվի փետրվարի 9-ին ես կքվեարկեմ մեր պարտիայի ու ժողովրդի լավագույն մարդկանց օգտին, այն մարդկանց օգտին, որոնք ինձ հայրենիք ու տուն տվին, հնարավորություն տվին կրթություն ստանալու, այն մարդկանց օգտին, որոնք իմ առաջ բացել են աճելու և առաջ գնալու լայն ճանապարհ։

Այնուհետև ելույթ է ունենում սովխոզի բանվոր Վալոդյա Դավթյանը, որը կարդում է իր «Վերադարձ» բանաստեղծությունը։ Հավաքի մասնակիցների համար վերջում տրվեց մերգ։

Ս. ԱԼԵՔՅԱՆ